3604
hmyltpltG

2004

3604
1162-ԿԿ
№ 10-4
448
6
208.1
Ղ-35
118

ՂԱՐԿԱՒՈՐ
ՀԱՐՑՄՈՒՆՔՆԵՐ

ամէն մարդոյ համար։

Թարգմանութիւն։

Երէրուրդ տպագրութիւն։

Ի ՄՈՍԿՈՎ,
Ի Տպագրատան Հեմարանի Տեարց Լազարեանց։
1840.

241

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Москва, 29 Сентября, 1839 года.

Цензоръ В. Флеровъ.

5056
38

Հատ հարկաւոր հարցմունքներ՝ ամէն մարդոյ համար։

—

Ա. Իսկի միտք ածելես, թէ քո հոգին անմահ է, և անչափ աղնիւ և պատուական է քան թէ մարմնդ։

Ապա հոգն կըդառնայ դէպի երկիրն՝ ինչպէս (որ առաջ) էր. և հոգին կըդառնայ Աստուծոյ մօտ՝ որ տուաւ նորան։ Ժող. ԺԲ. 7։

Մի վախենաք նորանցից որ մարմնըն սպանումեն և հոգին չեն կարող սպանել, քայց աւելի վախեցէք նորանից՝ որ կարող է հոգին և մարմնըն կորցնել գեհենի մէջն։ Մաթ. Ժ. 28։

Բ. Իսկի մին ժամանակ ճշմարտութեանով միտք ածելես, թէ մարդոյ հոգին մեղքով աղականված և պղծված է, և նրա համար յաւիտենական մահի տակն ընկած է։

Անօրէնութենով յղացաւ՝ և մեղքով ծնաւ ինձ իմ մայրս։ Սաղմ. Ճ. 7։

Արմատուց (Ռեշաւոթ հոլոգոց) ծնվածն՝ մարմին (Ռեշաւոթ) է։ Յոհան. Գ. 6։

Իսկի արդար չըկայ, իսկի մինն էլ չէ։ Հռովմ. Գ. 10։

Իրաւի որ բարկութեան որդիք էինք (մենք էլ) ինչպէս ուրիշներն։ Եփես. Բ. 3։

Մեղքի պաշարն մահ է։ Հռովմ. Զ. 23։

Գ. Միտք արի՞ր թէ Աստուածաշունչ գիրքն լիքն է զօրաւոր և զգուշացնող յորդորմունքով՝ որ Աստուած զարթնացնումէ մեզ նորանցով. որ մեր հոգոյ փրկութիւնըն ամէն բաներից գլխաւոր գործ համարինք։

Այս օր եթէ նորա ձայնըն լսէք, մի պընտացնէք ձեր սրտերըն՝ ինչպէս որ էն բարկացնելոյ ժամանակումն, փորձութեան օրումն, անապատի (չէօլի) միջումն։ Եբրայ. Գ. 7. 8։

Դուք էլ պատրաստ կացէք. ինչու որ՝

էն ժամն (ՍԱՀՄԱՆ) որ դուք չէք սպասիլ, որդին մարդոյ կըգայ։ Մատթ. Իդ. 44։

Ինչ օգուտ է մարդոյ՝ որ ամէն աշխարհքըս ստանայ և իրան անձին վնաս տայ՝ կամ թէ ինչ դին կըտայ մարդ իրան անձըն փրկելոյ համար։ Մատթ. ԺԶ. 26։

Դ. Իսկի մին ժամանակ ահով բռնվեցաը և շարժվեցար էս ահաւոր և շատ վախենալի մտածմունքովս՝ թէ լինի որ մին յանկարծ և անյուսալի ժամանակում մահով կանչվիս էս աշխարքիցս էն գալու աշխարհքըն, և իսկի մին ըոպէ էլ թող չի՛ տան քեզ, որ մին բան մտածես կամ աղօթք անես, կամ մին քիչ պատրաստես քո անձըդ յաւիտենական կեանքի համար։

Մի պարծենար էգուցվան օրովն. ինչու որ չես գիտում թէ էգուցվան օրն ինչ պիտի ծնի քեզ համար։ Առակ. ԻԷ. 1։

Մին հարուստ մարդոյ արտերն առատ պտուղ տուին։ Եւ իրան միտքումն մտածումը և ասում. ինչ անեմ. որ տեղ չըկայ որ իմ պտուղներըս էնտեղ ժողովեմ։

Եւ ասաց՝ գիտումեմ ինչ կանեմ. իմ համբարներըս կըքանդեմ, և էլ աւելի մեծ կըշինեմ, և իմ ցորենըս և ամէն բարիքներըս կըժողովեմ էնտեղ։ Եւ իմ անձիս կասեմ. ո՛վ անձն՝ շատ բարիքներ ունիս՝ շատ տարիների համար ամբարված. ապա հանգիստ առ, կեր, խմիր և ուրախ լեր։ Աստուած նորան ասաց. անմիտ. էս գիշերումս քո հոգիդ քեզանից յետ կըխնդրեն. ապա էն որ պատրաստեցիր՝ ո՞ւմ կըլինի։ Այնպէս էլ նա՝ որ իրան անձին համար գանձ (խաշնոյ) հաւաքէ, և աստուծով չըհարուստանայ։ Ղուկ. ժբ։ 16—21։

Ե. Դու քո մեղքերովդ Աստուածային օրէնքըն քանդել ես՝ և մեծ Աստուծոյն բարկացրել. ուրեմն մի թէ հիմիկ զարթնացե՞լ ես՝ որ տեսնես քո մեղանչական և ՀԱասակար գործքերըդ՝ որ քո հոգիդ կորցնումեն. և մի թէ խոնարհութենով խոստովանումես քո հոգոյ կորուստըն, և զղջանումես քո մեղաւոր Ճանապարհիցն։

Աստուած հիմիկ մարդկանց էս է պատ.

ուիրում. որ ամէն մէկն ապաշխարեն։ Գործ. ԺԷ. 30։

Թէ որ չապաշխարէք, ամէնքդ էլ էն-սպէս կըկորչիք։ Ղուկ. ԺԳ. 5։

Աստուած նորան (այսինքն Յիսուսին) առաջնորդ և փրկիչ բարձրացրուց իրան աջ ձեռքն. որ Իսրայէլին ապաշխարութիւն տայ՝ և մեղաց թողութիւն։ Գործ. Ե. 31։

Աստուծոյ հրեշտակների առաջին ուրախութիւն կըլինի մին մեղաւորի համար որ կապաշխարէ։ Ղուկ. ԺԵ. 10։

Դէն տրտմութիւնն որ աստուծով է՝ ապաշխարութիւն է գործում փրկութեան համար առանց զղջանալոյ։ Բ. Կորն. Է. 10։

Այսուհետև ապաշխարութեան արժանի պտուղ արէք։ Մատթ. Գ. 8։

Զ. Եթէ քո սրտի մէջ էն յոյսըն դնես՝ որ լինի թէ յետին ժամանակումն ապաշխարես, և եթէ օրէցօր խոստանաս՝ թէ յետոյ կըշտակեմ իմ վարքըս, ապա մի թէ չէ՞ս խաբում քո անձըդ՝ ահաւոր խաբէութեանով, որովհետև կարելի է որ հիւանդութեան ժամանակն, և մեռնելոյ

սահմանն յանկարծ բռնէ քեզ։ Այսպէսի ժամանակներ՝ իսկի պատշաճ ժամանակ չեն էդ մտածմունքներիդ և ծանր ծանր բաներիդ համար. և թէ որ հենց կամքով ուշացնես քո ապաշխարութիւնը՝ ապա լինի որ ոչ ժամանակ և ոչ ողորմութիւն տվվի քեզ՝ որ ապաշխարես. ինչու որ՝ ապաշխարելն և ողորմութիւն գտնելն քո ձեռքումդ չէ. բայց Աստուծոյ շնորհքովն է տըվվում մարդոյն։

Եւ երբ որ նա (Պօղոս) խօսումէր արդարութեան համար՝ և պարկեշտութեան՝ և էն նոր գալու դատաստանի համար. փիլիքս շատ ահով բռնվեցաւ, և պատասխան տուաւ՝ թէ դու հիմիկս գնա՝ և երբ որ ժամանակ կըլինի, կըկանչեմ քեզ։ Գործ. ԻԴ. 25։

(Ծանօթութիւն։)

Մէնակ լուսի մեն ջէյոյուլուն չունինակ՝ ըէ էլ էոպէոն պաշաճ ժամանակ էլաւ նորան՝ Ա-

աստուծոյ քանզի լուելոյ ի ապաշխարութենէն Աստուծոյ շնորհքն գանելոյ հոմար։

Ահա հիմիկ է ընդունելի ժամանակն, հիմիկ է փրկութեան օրն։ Բ. Կորն. Զ. 2։

Մի պարծենար էգուցվան օրովն. ինչու որ չես գիտում թէ էգուցվան օրն ինչ պիտի ծնի քեզ համար։ Առակ. ԻԷ. 1։

Ը. Գիտուամս՝ որ քո սիրտդ խաբեբայ է՝ և անհնարին չար։ Երեմ. ԺԷ. 9։ Եւ որ սրա համար շատ հեշտ մոլորվուամս և չես կարող քո յատուկ միտքդ, բնութիւնդ, վարքդ և պարտաւորութիւնդ ճշմարտապէս և շիտակ իմանալ, ինչպէս որ պէտք է քո հոգոյ փրկութեան համար։ Ապա եթէ էսպէս է՝ մի թէ պէտք չէ՞ քեզ՝ որ քո սիրտդ և միտքդ և վարքդ փորձես և քննես Աստուծոյ առաջին։ Մի թէ պէտք չէ՞ քեզ, որ աղօթք անես Դաւթի պէս՝ որ ասուամ։

Աստուած փորձիր ինձ. և ճանաչի՛ր իմ սիրտս. քննիր ինձ և ճանաչիր իմ գնա-

լը։ և տես թէ անօրէնութիւնք լինին իմ ձանապարհներումս։ ապա առաջնորդիր ինձ քո յաւիտենական ձանապարհներովն։ Սաղմ. ՃԼԸ. 23։

Ը. Մի թէ մտածեցիր Աստուծոյ օրէնքըն՝ թէ նա սուրբ է, արդար, և բարի։ Մի թէ քո անձըդ քննեցիր և փորձեցիր նորանով. գիտումե՞ս որ նա հոգևոր է՝ և հենց սրա համար էլ քո խորհուրդներըդ և մտածմունքներըդ դատումէ, ինչպէս որ քո խօսքերըդ և գործքերըդ. էլ գիտումե՞ս՝ որ եթէ հենց մին բանով էլ մին պատուիրանքի դէմ մեղանչես, դատապարտված ես։

Լսելէք որ առաջին մարդկանցն ասվեցաւ՝ թէ մի սպաներ. ինչու որ ով որ կըսպանէ՝ պարտական կըլինի դատաստանին։ Բայց ես ասումեմ ձեզ, թէ ով որ զուր տեղն կըբարկանայ իրան եղբօր վերայ, պարտական կըլինի դատաստանին. և ով որ իրան եղբօրն կասէ՝ յիմար. պարտական կըլինի մեծ դատաստանին. և նա որ իրան եղբօրն կասէ՝ մոլոս. (անխելք) պարտական

կըլինի գեհենի կրակին։ Լսելէք որ ասվեցաւ՝ թէ շնութիւն չանես. բայց ես ասումեմ ձեզ՝ թէ ամէն ով որ մին կնկան վերայ մտիկ տայ՝ նորան ցանկանալոյ համար՝ նա խսկոյն շնացաւ նորա հետ իրան սրտի մէջն։ Մաթ. Ե. 21. 22. 27. 28։

Եւ ես առանց օրէնքին մին ժամանակ կենդանի էի. բայց երբ որ պատուիրանքն հասաւ ինձ՝ մեղքն կենդանի էլաւ, և ես մեռայ, և հենց էն պատուիրանքն՝ որ կենաց համար էր (տրվված՝) նա ինձ համար մահի պատճառ էլաւ։ Գիտումենք որ օրէնքն հոգևոր է. բայց ես մարմնաւոր եմ՝ մեղքին ներքև ծախված։ Հռոմ. Է. 9.10.14։

Ով որ ամէն օրէնքըն պահէ, և մընումն մեղանչէ, ամէն օրէնքին էլաւ պարտական։ Յակ. Բ. 10։

Թ. Մի թէ Ճանաչեցիր թէ քո ամէն գործքերի արդարութիւնն մին կեղտոտ և պատռվված հին շորի նման է՝ և ինքն իրանից իսկի կարող չէ քեզ արդարացնել, մինչև որ խսպառ պէտք է ուրանալ էնպէ-

ոչ արդարութիւնը և դէն քցել՝ ինչպէս մին անօգուտ և անպիտան բան։

Մին քանի մարդկանց էլ՝ որ իրանց մտքերումն պարծենումէին՝ իբր թէ արդար են՝ և ուրիշներին ոչինչ էին համարում, էս առակը ասաց։ Երկու մարդ վեր էլան տաճարն որ աղօթք անեն. մինն փարիսեցի և մէկէլն մաքսաւոր (հի-հրու-չէ։) Փարիսեցին ջոկ կանգնած էր և առանձին էս աղօթքըս էր անում. (իմ) Աստուած գոհանումեմ քեզանից՝ որ ես ուրիշ մարդկանց պէս չեմ՝ յափշտակողների, և անիրաւների, և շնացողների. կամ թէ էս մաքսաւորիս պէս։ Բայց շաբաթումն երկու անգամ պաս եմ պահում, և իմ ամէն ապրանքներիցս տասանորդ եմ տալիս։

Եւ մաքսաւորն հեռու կանգնած էր՝ և իրան աչքերըն էլ չէր կամենում դէպի երկինքն բարձրացնել. բայց իրան կուրծքըն (դ՝օշքն) թակումէր և ասում. Աստուած քաւիր ինձ մեղաւորիս։ Ասումեմ ձեզ՝ թէ սա արդարացած գնաց իրան տունն,

քան թէ նա. ինչու որ ամէն ով որ իրան անձըն բարձրացնումէ՝ կըխոնարհվի, և ով որ իրան անձըն խոնարհացնումէ՝ կըբարձրանայ։ Ղուկ. ԺԸ. 9—14։

Եւ (մենք) ամէնքս պղծի նման էլանք. մեր արդարութիւնն (էլ) պիղծ շորի նման. և մենք ամենքս տերևի նման վեր թափվեցանք. մեր անօրէնութիւնների պատճառովն քամիներն ցրուեցին մեզ։ Եսայ. ԿԴ. 6։

Ո՛չ թէ արդարութեան գործքերին համար՝ որ մենք արինք, այլ իրան ողորմութեան համար՝ ապրեցրուց մեզ նոր ծնվելոյ աւազանովն և սուրբ հոգոյ նորոգութենովն։ Տիտ. Գ. 5։

Ժ. Թէ որ հիմիկ միտքումդ յայտնի իմացար քո հոգոյ խեղճութիւնըն, և սըրտումդ շարժվեցար դէպի զղջանալն էս ծանըր ծանր ուսմունքներովս. ապա գիտումը՞ս թէ ո՛չ թէ դու՝ բայց մէնակ սուրբ հոգին կարող է մին ճշմարիտ փոփոխութիւն գործել քո սրտիդ մէջն. և թէ չէս կարող

Աստուծոյ արքայութիւնը տեսնել եթէ ոչ նոր ծնվիս սուրբ հոգուցն։

Յիսուս պատասխան տուաւ և ասաց. Ճշմարիտը ասումեմ քեզ. թէ որ մինն ջրից և հոգուց չըծնվի՝ նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնն մտնել։ Յոհան. գ.Ե։

Բայց մենք ոչ թէ էս աշխարհքիս հոգին առինք, այլ էն հոգին՝ որ աստուածանից է. որ Ճանաչենք էն շնորհքը որ աստուածանից տըվվաւ մեզ։ Պատճառն որ՝ մարմնաւոր մարդն Աստուծոյ հոգոյ բաներըն չի՛ ընդունում. ինչու որ յիմարութի է նորա առաջին. և էլ չի՛ կարող գիտել՝ որ հոգևոր կերպով պէտք է քննվի։ Ա. Կորն. Բ. 12—14։

ԺԱ. Թէ որ սիրտդ շարժվել է զըղջութենով, և թէ որ աղաղակումես՝ ի՞նչ պէտք է անեմ ես որ ապրիմ. ապա մտածե՞լ ես Աստուծոյ սէրըն, որ իրան որդին տուաւ որ աշխարհքի մեղայ համար մեռնի։ Մի թէ հաւատումե՞ս թէ Յիսուսն Աստուած է ամէնին վերայ օրհնեալ յաւի-

տեանս. բայց մարմին էլաւ որ քեզ համար մեղք լինի, նա որ իսկի մեղք չըճանաչեց. և մի թէ կամենաՀումես տկանջ դնել ՀՀ աղքատ կորած մեղաւոր՝ երբ որ Քրիստոսի պաշտօնեաներն կաղաչեն քեզ Քրիստոսի տեղակ՝ որ հաշտվիս Աստուծոյ հետ։ Մի թէ կամենումե՞ս նորա մօտն գալ՝ և նորան ընդունել։ Մի թէ կամենումե՞ս համարձակվիլ՝ որ քո աղքատ և ապականված հոգիդ յանձնես նորա ձեռն՝ որ փրկըվի և սրբվի ամէն մեղքից նորա արիւնովն՝ և ապա արդարանայ Աստուծոյ առաջին։

Սա (յՕՀԱՆՆԷՍ) վկայութեան համար եկաւ՝ որ լուսոյ համար վկայէ՝ որ ամէնքն նորանով հաւատան։ Եւ բանն մարմին էլաւ՝ և մեր միջումն բնակվեցաւ. և նորա փառքըն տեսինք ինչպէս հօրից էլած միածին որդոյ փառքըն շնորհքով և ճշմարտութենով լիքն։ ՅՕՀԱՆ. ԻԳ. 7. 14։

Ով որ հաւատումէ նորան՝ չի՛ դատապարտվիլ. և ով որ չի՛ հաւատում նորան՝ հենց հիմիկ դատապարտվածէ. ինչու որ՝ չըհաւատաց Աստուծոյ միածին որդոյ անունին։ ՅՕՀԱՆ. Գ. 18։

Պատճառն որ ամէնքն մեղանչեցին և Աստուծոյ փառքէն պակասվեցան։ Եւ ձրի (հուքաւոյ) արդարանումն նորա շնորհքովն էն փրկութեան ձեռովն որ Յիսուս Քրիստոսումն էլաւ։ Որ Աստուած նորան առաջ դրաւ քաւութիւն լինելոյ համար նորա արիւնովն՝ հաւատքի ձեռովն. որ իրան արդարութիւնըն ցոյց տայ էն առաջուց գործված մեղքերի թողութեան համար։ Հռովմ. Գ. 23—25։

Ուրեմն Քրիստոսի կողմանէն պատգամաւոր (էլչի) ենք. ինչպէս որ Աստուած էլ յորդորումէ մեզանով։ Աղաչումենք Քրիստոսի կողմանէն. հաշտվեցէք Աստուծոյ հետ։ Պատճառն որ՝ ինքն նորան որ մեղք չէր գիտում մեզ համար մեղք արաւ, որ մենք նորանով Աստուծոյ արդարութիւն լինինք։ Բ. Կորնթ. Ե. 20. 21։

Ինձ մօտ եկէք՝ ամէն վաստակվածներ և բեռնաւորներ, և ես հանգիստ կըտամ ձեզ։ Մատթ. Ժա. 28։

ԺԲ. Մի թէ մտածեցիր թէ կարող չես պրծնիլ՝ թէ որ հոգս չանես էսպէսի

մեծ փրկութեան համար. և թէ որ չէս արդարացել Յիսուսի Քրիստոսի արիւնովն, որ օրէնքի վախճանն է՝ էն ամէնին արդարացնելոյ համար որ հաւատումէ նորան, կըմեռնիս քո մեղաց մէջն։ Մանաւանդ՝ մի թէ գիտումե՞ս որ ամէնիցն մեծ մեղք է ոչինչ համարիլ Քրիստոսի արիւնը և էն հաշտութիւնը որ նա արաւ։

Բայց ասացի ձեզ՝ թէ ձեր մեղաց մէջն կըմեռնիք. ինչու որ՝ եթէ չըհաւատաք, թէ (էն) ես եմ, ձեր մեղաց մէջն կըմեռնիք։ Յոհան. Ը. 24։

Նրա համար պէտք է մեզ՝ որ էլ աւելի ականջ դնենք էն ասած բաներին, որ չըլլինի թէ մին ժամանակ դատարկացած պակասվինք։ Պատճառն որ՝ եթէ էն բանն հաստատ էլաւ որ հրեշտակների ձեռովն խօսվեցաւ, և ամէն յանցանք և անհնազանդութիւն ընդունեց իրան արդար պատիժը։ Ապա մենք ի՞նչպէս կըպրծնինք՝ թէ որ անհոգ լինինք էնպէսի փրկութեան համար, որ առաջ քառոզվեցաւ Տէրից

ՀՍՍՀ-ՍՍՌ

և (ապա) նորանց ձեռոքն՝ որ լսեցին՝ մեր միջումն հաստատեցաւ։ Եբր. Բ. 1—3։

(Թէ որ) մինն Մովսէսի օրէնքըն անարգումէր՝ առանց ողորմութեան երկու կամ երեք վկայի խօսքով մեռնումէր։ Ապա հիմիկ որքա՞ն աւելի սատիկ պատժոյ արժանի կըհամարիք նորան՝ որ Աստուծոյ որդոյն ոտի տակ կոխեց և նոր ուխտի արիւնըն պիղծ համարեց՝ որ նա սրբեցաւ նորանով. և շնորհաց հոգոյն նախատինք տուաւ։ Եբրայ. Ժ. 28. 29։

ԺԳ. Թէ որ ասես՝ թէ արդարացեալ ես Քրիստոսի արիւնովն, հաւատքի ձեռովն, և թէ Աստուծոյ որդի ես էլեալ սուրբ հոգուոյն ծընվելով, մի թէ մտածեցիր թէ քո էդ մեծ երանութիւնդ հաստատ վըկայութենով և նշանով պէտք է ճանաչվի, և թէ էդ հաստատ և Աստուածաշնչին համաձայն վկայութիւնդ և նշանդ՝ մենակ էն է, որ սուրբ հոգին քո սրտի մէջն բնակվումէ և նորան լուսաւորումէ և սրբումէ. որ հոգովն մեռցնես մարմնոյ գործքերըն և քո ցանկութիւններըդ և հեշտութիւննե-

ըրդ սպանես, և էս չար աշխարհքիցս էլ հրաժարվիս։ Եւ սուրբ հոգոյ պտուղներն՝ որ քո սրտումդ են, մի թէ քո կեանքի և վարքի մէջըն էլ երևնումեն, որ ոչ թէ մէնակ քո պարտականութիւններըն որ դէպի Աստուած ունիս կատարես, բայց էլ ամէն մարդկանց բարի անես, մանաւանդ նորանց՝ որ քո հաւատքի ընտանիք են։

Զէ՞ք գիտում՝ որ անիրաւներն Աստուծոյ արքայութիւնըն չեն ժառանգիլ։ Եւ դուք էնպիսիներ էիք. բայց (հիմիկ) լուացվաք՝ բայց սրբվեցաք. բայց արդարացաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն և մեր Աստուծոյ հոգովն։ Ա. Կորնթ. Զ. 9.11։

Եւ ես նորանց վերայ իմ անձըս սուրբ եմ անում՝ որ նորանք էլ ճշմարտութեանով սրբված լինին։ Յոհան. ԺԷ. 19։

Յիսուս իրան անձըն մեզ համար տուաւ. որ մեզ ամէն անօրէնութենից փրկէ. և սրբելով իրան համար յատուկ ժողովուրդ շինէ, որ ջերմեռանդութենով բարի գործքել ին հետևինք։ Տիտ. Բ. 14։

Աստուծոյ փրկութիւն տուօղ շնորհքն երևեցաւ ամէն մարդկանց որ էլ խրատուէ մեզ՝ որ ուրանանք ամբարշտութիւնը և աշխարհական ցանկութիւնները (և) պարկեշտութենով և արդարութենով և Աստուածպաշտութենով ապրինք էս աշխարհքումս։ Տիտ. Բ. 11. 12։

Բայց լինի որ մինն ասէ. թէ դու հաւատք ունիս՝ և ես գործք ունիմ. (ապա) ցոյց տուր ինձ քո հաւատքը դուռանց գործքերի՝ և ես իմ հաւատքը ցոյց կըտամ քեզ իմ գործքերովս։ Յակոբ. Բ. 28։

ԺԴ. Մի թէ յիշումես քո մըտքումդ՝ թէ թէև ամէն հոգևոր շնորհքներն Աստուծոյ մեծ և պատուական խոստմունքներումն յայտնվեցան Քրիստոսով և քեզ համար պատրաստ են, բայց հենց էնպէս էլ պէտք է քեզ որ խնդրես նորանց՝ և ջանք էլ անես նորանց համար՝ ջերմեռանդ աղօթքով, մինչև որ ընդունիս նորանց՝ միշտ մտիկ տալով Յիսուսի վերայ, որ նորա մահի զօրութենովն մեղաց հին մարդն ջնջվի, և նոր կեանքի մէջ ման գաս։

Խնդրեցէք և կըտրվվի ձեզ, մանն եկէք և կըգտնէք. (դուռն) թակեցէք և կըբացվի ձեզ։ Մաթ. Է. 7։

Անդադար աղօթք արէք։ Թես. Ե. 17։

Այ՛օ գիտացէք՝ որ մեր հին մարդն նորա հետ խաչվեցաւ՝ որ մեղաց մարմինն խափանվի. որ մենք էլ չըծառայենք մեղքին։ Բայց շնորհակալութիւն (լինի) Աստուծոյ՝ որ մեղքի ծառայ էիք (դուք) և սրտով հնազանդվեցաք էն վարդապետութեան օրինակին՝ որ նորան յանձնվեցաք։ Ապա ուրեմն մեղքիցն ազատված ծառայեցէք արդարութեան։ Հռովմ. Զ. 6. 17։

Ապա թէ որ դուք որ չար էք՝ գիտուք մէք բարի պարգևներ տալ ձեր որդոցն. էլ որքան աւելի ձեր հայրն երկնքիցն բարի բաներ կըտայ նորանց՝ որ ուզումեն նորանից։ Ղուկ. ԺԱ. 13։

ԺԵ. Մի թէ ջանք ես անում որ Աստուծոյ շնորհքըն գտնելոյ հնարքներըն գործ ածես։ Մի թէ սիրումես և պատուումես Տէրի օրըն, և սուրբ պահումես նո-

բան։ Մի թէ թող չէ՞ս անում որ պղծվի նա ծուլութեանով կամ ունայն ուրախութեան հետևելով և կամ աշխատանք անելով։ Մանաւանդ՝ մի թէ համարձուս՝ թէ քեզ համար մեծ պարտաւորութիւն և յատուկ առանձին շնորհք է՝ որ էն սուրբ օրըն գործ ածես քո հոգոյ և յաւիտենական կեանքի համար, և նորանում մէակ Աստուծոյ ծառայութեանն պարապվիս։

Մի՞թէ բեր շաբաթ օրըն՝ որ սուրբ պահես նորան։ Վեց օր գործիր և քո ամէն գործքերըդ արա։ Եօթներորդ օրումն քո Տէր Աստուծոյ շաբաթն է, մի գործեր նորանում քո ամէն գործքերըդ՝ ոչ դու՝ (և) ոչ քո տղան՝ ոչ քո աղջիկն՝ ոչ քո ծառան՝ ոչ աղախինն (ղուլամ.) ոչ քո եզն և էշն, ոչ քեզ մօտ եկածն՝ և ոչ էլ օտարականն որ քեզանում է. ինչու որ՝ Աստուած վեց օրում արաւ երկինքըն և երկիրըս և ծովըն և էն ամէն բաներըն որ նորանում է. և եօթներորդ օրումն հանգիստ առաւ՝ և նորան սրբեց։ Եղ. ի. 8—11։

Քրիստոսի խօսքն լիութենով բընակվի ձեր միջումն որ ամէն իմաստութենով իրար սովորցնէք և խրատէք սաղմոսներով և օրհնութիւններով և հոգևոր երգով՝ և շնորհքով Աստուծոյն օրհնէք ձեր սրտերումն։ Կոչ. Գ. 16։

Զ՛լթողենք մեր իրար ժողովքըն՝ ինչպէս որ մին քանիսն սովոր են անել. բայց իրար յորդորենք։ Եբրայ. Ժ. 25։

Ժ.Զ. Իսկի փորձով իմացե՞լես՝ թէ Աստուծոյ Ճանապարհներն ուրախութեան Ճանապարհներ են. և թէ ոչ մէնակ պարտական ես սրբութեան և հնազանդութեան Ճանապարհովն գնալ, որովհետև մեծ Աստուծոյ իշխանութենովն է հրամայված, բայց որ հենց նորա ծառայութիւնն կատարեալ ազատութիւն է։ Մի թէ փորձով գիտՃիմես՝ թէ երբ որ դու սրբութեան հետևիս. քո սիրտդ ուրախանումէ՝ թէ մխիթարութենովն և խաղաղութենովն որ հիմիկ վայելումէ, և թէ էն փառաց յուսովն որ նոր գալու աշխարհքումն պիտի ժառանգես։

Սիրելիներ՝ հիմիկ Աստուծոյ որդիք ենք. և դեռ յայտնի չէ՝ թէ ինչ պիտի լինինք։ Գիտումենք թէ երբ որ նա կըյայտնըվի, նորան նման կըլինինք. ինչու որ՝ կըտեսնենք նորան ինչպէս որ է։ Եւ ամէն ով որ էս յոյսըս ունի իրանում, սրբումէ իրան անձըն՝ ինչպէս որ նա սուրբ է։ Ա. Յովհան. Գ. 2. 3։

Եւ կասես էն օրուանից՝ կօրհնեմ քեզ՝ որ բարկացար ինձ վերայ, և քո բարկութիւնըդ յետ դարձրիր ինձանից, և ինձ ողորմեցար։ Ահա իմ Աստուած իմ փրկիչ Տէրն է. և իմ յոյսըս նորա վերայ կըդնեմ, և նորանով կըփրկվիմ, և չեմ վախենալ. ինչու որ՝ իմ փառքս և իմ օրհնութիւնս Տէրն (է), և ինձ փրկութիւն էլաւ (նա։) Եւ ուրախութեան ջուրըն փրկութեան աղբիւրից առէք։ Եսայ. ԺԲ. 1—3։

Նորա ճանապարհներն բարութեան ճանապարհներ են. և նորա ամէն դնացքն խաղաղութենով։ Առակ. Գ. 17։

Ուրեմն մենք որ հաւատքով արդարացած ենք, խաղաղութիւն ունենանք Աստուծոյ

հետ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռքին։ Որ նորանով էլ ընդունեցինք հաւատքով մտնելն էս շնորհքիս մէջ որ նորանում կացած ենք. և Աստուծոյ փառայ յուսովը պարծենումենք։ Եւ չէ թէ միայակ էսչափ՝ բայց մեր նեղութիւններին համար էլ պարծենումենք. ինչու որ՝ գիտումենք որ նեղութիւնները համբերութիւն են գործում. (և) համբերութիւնն՝ վարժութիւն և վարժութիւնն յոյս։ Յոյսն իսկի մին ժամանակ չի՛ ամաչացնում. պատճառն որ՝ Աստուծոյ սէրն թափված է մեր սրտերի մէջ սուրբ հոգոյ ձեռքին՝ որ տըվված մեզ։ Հռովմայեցւոց. Ե. 1—5։

ԺԱ. Մի թէ պատճուումես և հաստատմաքով ակա՛ջ ես դնում աւետարանի քարոզութեան։ Իսկի միտք դնելով քննումես սը գրքերը՝ միտք անելով թէ սորանք հաստատվել են որ իմաստուն անեն քեզ փրկուելու համար՝ էն հաւատքովն որ Քրիստոսումն է։

Ուրեմն հաւատքն լսելուցն է և լսելն՝ Քրիստոսի խօսքիցն։ Հռովմ. Ժ. 17։

Որ տղայութիւնից դ սուրբ գրքերը գի-
տուես, որ նորանք կարող են քեզ իմաս-
տուն անել փրկութեան համար էն հա-
ւատքովը՝ որ Քրիստոս Յիսուսումն է։ Բ.
Տիմ. Գ. 15։

Ի՛նչպէս սիրեցի քո օրէնքըդ. ամէն օր
իմ խօսքս էին։ Սաղմ. ՃԺԸ. 17։

Քննեցէք գրքերը՝ որ դուք կարծումէք
թէ նորանցով ունիք յաւիտենական կեան-
քը։ Եւ հենց նորանք են որ ինձ համար
վկայումեն։ Յոհան. Ե. 39։

Բաց արա իմ աչքերը, որ մտիկ տամ
քո օրէնքի հրաշքներին։ Սաղմ. ՃԺԸ. 18։

Սորանք (բերիացիքն) էլ աւելի ազնիւ
անձինք էին քան թէ նորանք որ Թեսա-
ղոնիկէ էին՝ որ (Աստուծոյ) խօսքը ամէն
յօժարութեանով ընդունեցին. միշտ գրքե-
րը քննումէին՝ թէ էս (բանս) էսպէս է։
Գործ. ԺԷ. 11։

ԺԸ. Մի թէ հաստատ ժիր և հաւա-
տարիմ ես քո անձըդ քննելոյ համար՝ որ
չըլինի թէ մէնակ դրսի կերպարանքով

Աստուածապաշտ երևիս և կեղծաւորութեան մէջ ընկնիս։ Իսկի միտքդ ես բերում՝ էն որ դըրքերն խօսումեն մին քանէսին համար. որ կարծումէին թէ Ճանաչումեն Աստուծոյ. հայր կանչելով նորան և ասումեն՝ թէ վախումենք և սիրումենք նորան, դեռ քանի որ մէնակ անուն ունէին և դրսևանց Աստուածպաշտութեան կերպարանք՝ առանց Ճշմարիտ հաղորդութիւն ունելոյ նորա հետ։ Ուրեմն Աստուծոյ վախումն ես մեն գալիս. ջանք ես անում որ Քրիստոսի խաչի զօրութենումն շիտակես քո չար վարքըդ՝ քո աշխարհական ցանկութիւններըդ, քո յիմար մտածմունքներըդ՝ քո դատարկ և պիղծ խօսքերըդ, և էս՝ ամէն սրտով, միշտ ամէն օր և ամէն ժամանակ անհումես, երբ որ նորանք առաջ են գալիս։ Զարթնացնումես քո անձըդ որ կատարես էս քո պարտաւորութիւններըդ։ Մի թէ յետին գործքերըդ շատ են առաջիններիցն։

Ուրդին փառաւորումէ (իրան) հօրըն՝ և ծառան վախումէ իրան տէրիցն. ապա ու-

բեմն թէ հայր եմ, ո՞ւր է իմ փառքս. և թէ Տէր եմ, ո՞ւր է իմ պատիւս. ասումէ Տէր ամենակարօղն. դո՛ւք քահանայքդ էք՝ որ իմ անունըս բամբասումէք, և ասում. թէ ի՞նչով բամբասեցինք քո անունըդ։ Մաղաք. ա. 6։

Այս ժողովուրդս պռօշներովն է պատուում ինձ, և իրանց սիրտն ինձանից հեռացած ջոկված է։ Մաթէ. ժե. 8։

Խոստովանումն թէ Աստուծոյն գիտեն և իրանց գործքերովն ուրանումն նորան. որ պիղծ են և անհաւատ, և ամէն բարի գործքերի համար անպիտան։ Տիտ. ա. 16։

Որ Աստուած պաշտութեան կերպարանքն ունին, և նորա զօրութենիցն ուրացած են. յե՛տ քաշվիր նորանցից։ Բ. Տիմ. գ. 5։

ԺԹ. Ի՛մ մահկանացու ընկեր՝ մի թէ պէտք չէ՞ քիչ որ ամէն բանից աւելի յիշես և պարթնանաս էս մըտածմունքներովս՝ թէ իսկի մին բան կարող չէ օգնել կամ միխիթարել քեզ մեռնելոյ սահմանումն.

բայց մինակ Քրիստոսի փրկութիւն տուող դիտութիւնն, և Աստուածաշունչ գրքերով հաստատված յոյսն՝ որ տէր Յիսուսի Քրիստոսի ձեռքն յաւիտենական կեանքի մէջ կըմտնես։

Ո՛վ մահ՝ ո՞ւրտեղ է քո յաղթութիւնդ. դժոխք՝ ո՞ւրտեղ է ծակողդ. մահի ծակողն մեղքն է և մեղքի զօրութիւնն օրէնքն։ Բայց շնորհակալութի՛ւն լինի Աստուծոյ՝ որ մեզ յաղթութիւն տուաւ՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռքն։ Ա. Կորն. ԺԵ. 55։

Թէ և մահի շուաքներուն մէջ ման գամ, չեմ՝ վախենալ. ինչու որ դու ո՛վ Տէր՝ ինձ հետ ես։ Քո յուսդ (մահակդ) և գաւազանդ՝ դոքանք կըմխիթարեն ինձ։ Սաղմ. ԻԳ. 4։

Երանի՛ (է) էն մեռելներուն, որ հիմիկ շուտով Տէրուն՝ ննջեցին (մեռան.) հոգիկ էս է ասում. պատճառն՝ որ իրանց աշխատանքներուցն հանգիստ առին. և իրանց գործքերը՝ գնային իրանց ետևէն։ Յայտ. ԺԴ. 13։

Ի. Վերջապէս աղաչումեմ քեզ շատ

ջերմեռանդութենով՝ որ միշտ մտածես և միտքդ բերես թէ մեծ դատաստան պիտի լինի արդարներին և մեղաւորներին վերայ, և թէ դու և ես և ամէն աշխարհքի մարդիք պէտք է երևինք էն օրուն արդար դատաւորի առաջին, չէ թէ որ թամաշայ անենք, բայց որ դատվինք մեր գործքերին պէս. և ապա արդար դատաստան և վճիռ կընդունինք մեծ և սուրբ Աստուածանէն։

Եւ որ ժամանակ որդին մարդոյ իրան փառքովն կըգայ և ամէն հրեշտակներն նորա հետ՝ էն ժամանակն իրան փառայ աթոռին վերայ կընստի։ Եւ ամէն ազգերն կըժողովվին նորա առաջին, և նորանց կըջոկէ իրարից՝ ինչպէս մին հովիւ (չէօպան) որ ոչխարները այծերից կըջոկէ։ Մատթ. իե. 31։

Մեր Տէր Յիսուս Քրիստոսն կըյայտնըվի երկնքից իրան զօրութեան հրեշտակներովն։ Կրակի բոցով վրէժ առնելոյ նորանցից՝ որ Աստուծոյն չեն ճանաչում. և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի աւետարա-

նին չեն հնազանդվում։ Որ նորանք պա-
տիժ կրքաշեն յաւիտենական կորուստը
Տէրի երեսին և նորա փառաւոր զօրութե-
նից։ Բ. Թէսաղ. Ա. 7—9։

Սրա համար դուք էլ պատրաստ կացէք.
ինչու որ՝ էն ժամն (սահմանն) որ դուք չէք
սպասիլ՝ որդին մարդոյ կըգայ։ Մատթէոս.
ԻԴ. 44։

Եւ նորանք (ամբարիշտներն) կըգընան
յաւիտենական տանջանքն. և արդարներն
յաւիտենական կեանքն։ Մատթ. ԻԵ. 46։

Յորդորմունք։

Կարդացիր էս հարցմունքներըս՝ մի թէ
սուրբ գրքերից չե՞ն հաւաքված. մի թէ
ոնասելի օգտակար և հարկաւոր չե՞ն. մի
թէ էնպէսի բանելի համար չե՞ն խօսում՝
որ թէ էս ժամանակիս և թէ յաւիտենա-
կան երանութեանն վերայ են մտիկ տալիս։
Մի թէ դու ոչ ինչ չըհամարեցիր նո-
րանց քո մարմնաւոր աշխատանքներին և

զբաղմունքներին հետեվելով և կամ էս աշխարհքիս հեշտ և փուչ ուրախութիւններին անմիտ ցանկանալով։ Ո՞խ երանելի է սրանից ետև իմաստուն լինիս, որ իմանաս էս բաներըս. և սրտի ջերմեռանդութենով մտածես քո վերջըն և վախճանըն։ Քանի՞ մեծ ողորմութիւն է որ քո տգիտութենումդ և մեղքերումդ չըկտրվեցար և դէն չըքցվեցար, և որ Աստուծոյ երեսից և նորա արքայութենից դուրս չըհանվեցար։ Մի՞թե դիր և լսի՞ր աւետարանի բարի աւետիքի ձայնըն։ Աստուած դեռ համբերումէ՝ որ շնորհք և ողորմութիւն տայ քեզ։ Ողորմութեան դուռն դեռ բաց է՝ և դեռ հիմիկ տեղ կայ քեզ համար։ Յիսուս Քրիստոսն եկաւ աշխարհքս, որ մեղաւորները փրկէ, հա՛ հենց մեղաւորների գլխաւորըն էլ։ Նորա արիւնն սրբումէ ամէն մեղքերից։ Հիմիկ է ընդունելի ժամանակ, հիմիկ է փրկութեան օրն։ Ա՛կ աղքատ մեղաւոր էս շնորհք տուող փըրկչի մօտն. ինչու որ՝ նա՛ է տալիս արդարութիւն և խաղաղութիւն և փառք. և նա

024

իսկի մընին դուրս չի՛ հանում՝ ով որ հաւատքով նորա մօտն է գալիս։ Տէրն տայ քեզ որ կամենաս և անես նորա բարի կամքն. և ապա վերջն կըլինի խաղաղութիւն և յաւիտենական կեանք։

ՎԱԽՃԱՆ։

ՀԱՅԿ-ՍՕՐԱ.